նախագիծ 2
արձանագրային

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

Հ. Թովմասյան

2

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացնել նոր 128.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 128.1 Առևտրային կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող վեճերի արագացված դատաքննությունը

1. Առևտրային կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող վեճերի դեպքում դատարանը կիրառում է արագացված դատաքննություն, եթե պահանջը հիմնված է գրավոր գործարքի և անվիճելի իրավունքի վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում դատարանը կայացնում է որոշում արագացված դատաքննություն կիրառելու մասին:

3. Դատարանը որոշում է կայացնում առևտրային կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող վեճերի արագացված դատաքննություն կիրառելու որոշումը վերացնելու մասին, եթե կողմերի միջև ծագել է վեճ իրավունքի մասին և առաջացել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի ապացուցման համար ապացույցներ ձեռք բերելու կամ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն:»:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում դատարանն անհապաղ կայացնում է վճիռ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով ինքնուրույն կարգավորում չեն ստացել առևտրային կազմակերպությունների միջև ծագով վեճերի լուծման ընթացակարգերը: Խնդիրն այն է, որ առևտրային կազմակերպությունների միջև ծագող վեճերը, որպես կանոն, լինում են կողմերի միջև կնքված գրավոր գործարքներից բխող, ուստի ապացուցման և դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունը գրեթե բացակայում է: Մինչդեռ նման դեպքերում ևս համապատասխան վեճերը դատարանում քննվում են ընդհանուր ընթացակարգերով, ինչը ոչ միայն զգալիորեն ծանրաբեռնում է դատարանների աշխատանքը, այլ նաև անհարկի հետաձգում է ոչ բարդ և ոչ ծավալուն գործերի լուծման և կողմերի խախտված իրավունքների վերականգնման ժամկետները:

Առաջարկվող լուծումները.

Նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով ինքնուրույն կարգովորման ենթարկել առևտրային կազմակերպությունների միջև ծագով վեճերի լուծման ընթացակարգերը, մասնավորապես նախատեսվում է, որ նշված դեպքերում դատարանը կիրառում է արագացված դատաքննություն, եթե պահանջը հիմնված է գրավոր գործարքի և անվիճելի իրավունքի վրա: Կարգավորման է ենթարկվում նաև առևտրային կազմակերպությունների միջև ծագով վեճերի լուծման դեպքում դատարանի կողմից կայացված արագացված դատաքննություն կիրառելու որոշումը վերացնելու հետ կապված հարաբերությունները, մասնավորապես սահմանվում է, որ դատարանը որոշում է կայացնում առևտրային կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող վեճերի արագացված դատաքննություն կիրառելու որոշումը վերացնելու մասին, եթե կողմերի միջև ծագել է

վեճ իրավունքի մասին և առաջացել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի ապացուցման համար ապացույցներ ձեռք բերելու կամ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն:

Ակնկալվող արդյունք.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է արագացված դատաքննության միջոցով հնարավորինս պարզեցնել առևտրային կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող վեճերի լուծման ընթացակարգերը և առավել սեղմ ժամկետներում վերականգնել համապատասխան կազմակերպությունների իրավունքներն ու նպաստել վերջիններիս բնականոն գործունեության ապահովմանը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, և այն համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխություններ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն 2011 թվականի մարտի 21-ի թիվ 1/4.1-2/2789-11 գրություն | Առաջարկություններ չկան: | | |